**Արձանագրություն N 6**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արման Հարությունյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

1.1 «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի, «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ի, «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի, «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

1.2 «ԷՅՁ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (3-րդ չափաբաժնի մասով «ԷՅՁ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից www.armeps.am կայքում՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում /այսուհետ՝ Համակարգ/ կցված <<Առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարության>> (Հավելված 4.1) փոխարեն կցված է <<Աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը>> (Հավելված 3.6), բայց, քանի որ մյուս չափաբաժինների մասով Համակարգում կցված է <<Առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը>> (Հավելված 4.1), հանձնաժողովը 3-րդ չափաբաժնի մասով ևս հիմք է ընդունում նույն հավելվածը):

1.3 «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությանը>> (Հավելված 2) կցված են փաստաթղթեր, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից չեն դիտարկվել:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

2.1 «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2 «ԷՅՁ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում>>-ում (Հավելված 1) նշած է, որ <<«ԷՅՁ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կողմից <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08>> ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1, 2, 3, 4, 5 չափաբաժնին (չափաբաժիններին)>>, ինչպես նաև նույն հավելվածի 3-րդ կետում և <<Առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություն>>-ում (Հավելված 4.1) նշած է 5-րդ չափաբաժինը, սակայն <<Գնի առաջարկ>>-ում (Հավելված 4), ինչպես նաև Համակարգում 5-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած չէ:

2.3 «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

ա) <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն>>-ում (Հավելված 2) շարադրանքը թերի է,

բ) <<Աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարություն>>-ում (Հավելված 3.6) և <<Առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություն>>-ում (Հավելված 4.1) <<հայտնում>> բառի փոխարեն պետք է լինի <<հայտարարում>> բառը:

2.4 «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն>>-ում (Հավելված 2), բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

2.5 «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ <<Գնի առաջարկի>> (Հավելված 4), որի վրա բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Հանձնաժողովը որոշեց «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 35-րդ կետի 9-րդ ենթակետը, 44-րդ կետի 4-րդ ենթակետը և 45-րդ կետը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

3. «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված <<Գնի առաջարկ>>-ում (Հավելված 4) առկա է թվաբանական անճշտություն, ինչպես նաև 5-րդ չափաբաժնի համար ներկայացրած <<Գնի առաջարկ>>-ում (Հավելված 4) չափաբաժնի համարը սխալ է գրված:

Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով և 45-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մերժել «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի հայտը՝ 1-ին և 5-րդ չափաբաժինների մասով:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

## 4. Մասնակիցների առաջարկած գներն են.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | | | | «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք |
| 1 | Սեղանի համակարգիչ | 32 625 000 | 3 000 000 | 35 625 000 | 7 125 000 | 42 750 000 | 28 885 937,5 | 41 265 562,5 | 33 012 500 | 6 602 500 | 39 615 000 | 32 000 000 |
| 2 | Սեղանի համակարգիչ | 21 320 000 | 1 000 000 | 22 320 000 | 4 464 000 | 26 784 000 | 16 446 500,0 | 2 349 500,0 | 18 796 000 | 3 759 200 | 22 555 200 | 20 000 000 |
| 3 | Համակարգչային սերվեր | 11 500 000 | 500 000 | 12 000 000 | 2 400 000 | 14 400 000 | 12 974 062,5 | 1 853 437,5 | 14 827 500 | 2 965 500 | 17 793 000 | 10 000 000 |
| 4 | Լազերային տպիչ | 2 275 000 | 200 000 | 2 475 000 | 495 000 | 2 970 000 | 2 460 937,5 | 351 562,5 | 2 812 500 | 562 500 | 3 375 000 | 2 245 000 |
| 5 | Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ | | | | | | 10 711 458,33 | 1 530 208,33 | 12 241 666,66 | 2 448 333,33 | 14 690 000 | |

| «ՏԵԽՆԵՖՈՐՈՒՄ» ՍՊԸ | | | | «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ | | | | | «Կոպի Սերվիս» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 2 627 500 | 34 627 500 | 6 925 500 | 41 553 000 | | | | | | | | | | |
| 1 552 000 | 21 552 000 | 4 310 400 | 25 862 400 | | | | | | | | | | |
| 1 250 000 | 11 250 000 | 2 250 000 | 13 500 000 | | | | | | | | | | |
| 200 000 | 2 445 000 | 489 000 | 2 934 000 | 2 749 857 | 137 493 | 2 887 350 | 577 470 | 3 464 820 | | | | | |
| | | | | 4 369 000 | 218 450 | 4 587 450 | 917 490 | 5 504 940 | 4 650 000 | 250 000 | 4 900 000 | 980 000 | 5 880 000 |

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. նոյեմբերի 15-ին, ժամը 11:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտերում արձանագրված՝ իրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ Կարեն Մելքոնյան

Անդամներ՝

Կարեն Համբարձումյան

Խորեն Պետրոսյան

Արման Հարությունյան

Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան